ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«07» օգոստոսի 2026թ. N ՄՊ/507-Ա

ք. Արմավիր

ՍԱՄՍՈՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N1 հավելվածի 3-րդ, 7-րդ և 9-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 20-րդ կետը և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սամսոն Սարգսյանի 2026 թվականի օգոստոսի 7-ի զեկուցագիրը՝

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սամսոն Սարգսյանին 2026 թվականի օգոստոսի 7-ին գործուղել «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց», «Մրգաշատի Մ. Մաղաքյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց», «Զրաշենի միջնակարգ դպրոց», «Քարակերտի թիվ 2 միջնակարգ դպրոց» և «Լուկաշինի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքին, ինչպես նաև ուսումնական հաստատությունների շենքերի, շինությունների, տարածքների, գույքի և ենթակառուցվածքների պահպանության վիճակին տեղում ծանոթանալու, առկա խնդիրներն արձանագրելու և համապատասխան ուսումնասիրություն իրականացնելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Արայիկ Հակոբյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ՝ Ա. Համբարձումյան)՝ աշխատակցի փոխադրումն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
4. Փոխադրումն իրականացնել Nissan Tiida մակնիշի 638LL70 համարանիշի ավտոմեքենայով:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սամսոն Սարգսյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 09/08/2019 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

04447253